

«Փանտախոս, խօլերա եւ զանազան ուրիշ վարակիչ հիւանդութիւններ սոսկալի աւերիչ հեղեղի նման անցնում են երկրիս վրայով եւ հազարաւոր, միլիօնաւոր մարդկանց սրբումտանում:

«Այս սարսափելի համաճարակ հիւանդութիւնները սարսափ են ազդում մարդկութեան վրայ. մենք ամեն միջոցներով կուռում ենք նրանց դէմ, այն-ինչ մենք ինքներս գիտակցօրէն տալիս ենք մեզ արբեցութեան ախտին, որ պակաս վնաս չի պատճառում, քան յիշած հիւանդութիւնները: Գոնէ նրանք սպանում են մարդկանց առանձին-առանձին և չեն դիպչում ժառանգներին, այն ինչ ալիօժօլիզմը հիւանդացնում ու անպէտք է դարձնում ոչ միայն առանձին մարդկանց, այլև ամբողջ սերունդներ:

«Միայն սիֆիլիսը (վատ ցաւը) ու թոքախտը կարող են հաւասարուել ալիօժօլիզմին այս կողմից:

«Ամեն մարդ իրաւունք ունի իր կեանքի վրայ, բայց սարսափելի չարագործութիւն է մի ամբողջ սերնդի հիւանդութեան ու մահուան պատճառ դառնալ:

«Թող ամենքը հասկանան այդ պատուէրը:

«Թող ամեն մէկը, երբ արագի թասը ձեռքն է առնում, հասկանայ, որ թոյն է խմում,—մի սարսափելի թոյն, որ ոչ միայն պիտի քայքայի նրա մարմինն ու դժբախտացնի նրան, այլև նրա երեխաների ու սերնդի կործանման պատճառը պիտի դառնայ:

«Մովսէս մարգարէն տասը պատգամներ տուեց մարդկանց: Եթէ նա մեր դարերում ապրէր, եթէ նա էլ տեսած լինէր ալիօժօլիզմի գործած սարսափելի աւերումները, անշուշտ նա մի տասներմէկերորդ պատգամ էլ կը տար մարդկութեանը թէ. «Մի խմիր»:

Լ. Ս.

16) Ен. Г. М. Тумановъ. Земельные вопросы и преступность на Кавказѣ. С. Петербургъ 1901 г. цѣна 60 коп.

Հեղինակը ի մի է հաւաքել զանազան ժամանակներում «Вѣстн. Европы», «Русская Мысль» ամսագրներում և «Новое Обозр.» թերթում լրյս տեսած իր մի շարք յօդուածները՝ կովկասի հողային, գաղթականային, դասակարգային հարցերի և տեղային աւազակութիւնների, ինչպէս և վարչական մի քանի անկանոնութիւնների մասին:

Մեր ազգաբնակիչների ստուգար մասի ապրուստի համար հողատիրական խճճուած հարցը առաջնակարգ կարևորութիւն ունի, մինչդեռ նոյն իսկ վարչական շրջաններում այդ հարցի շատ կողմերը դեռ ևս պարզուած չեն: Տեղական հանգամանքներին լաւ ծանօթ անձանց կողմից այդ հարցերի հրապարակախօսական լուսարանութիւնը մայրաքաղաքների մամուլի մէջ մեծ նշանակութիւն ունի և ցանկալի է, որ շատ յաճախ շօշափուեն այդ խնդիրները ազդեցիկ հրատարակութիւնների մէջ:

Թէև մեր գիւղացիների տնտեսական դրութեան մասին առատ նիւթեր հաւաքուել են դեռ ութսունական թուականներին (Материалы по изсл. экон. быта гос. крестьян Закавказья), բայց այդ բազմահատոր հետազոտութիւնները մատչելի են ընթերցողների շատ նեղ շրջանին: Իշխ. Թումանովի գիրքը միայն մասամբ կարող է լրացնել այդ պակասը, շօշափելով համառօտ ձևով հարցի միայն մի քանի կողմերը: Շատ ցանկալի է, որ ներկայումս, երբ ծրագրուած է մեր գիւղացիների հողային դրութեան վերջնական օրէնսդրական կանոնաւորումը, մամուլը աշխատի բազմակողմանի քննութեամբ պարզել մեր երկրի տնտեսական կեանքի այդ հիմնական կողմը, մատնանիշ անելով այն ուղղութիւնը այդ խնդրում, որ աւելի շատ կ'ապահովի երկրագործ մասսայի բարեկեցութիւնը: Անշուշտ, աւելի նպատակայարմար է մայրաքաղաքների ազդեցիկ հրատարակութիւնների մէջ («Вѣстн. Европы», «С. Пет. Вѣд.» և այն) արծարծել այդ հարցերը: Իշխ. Թումանովի այս գրքից կարելի է եզրակացնել, որ նրա բռնած ուղղութիւնը հողային հարցում շատ համակրելի է և արդարամիտ. ուստի ցանկալի է, որ նա աւելի եւս մեծ եռանդով շարունակի իր հրապարակախօսական օգնութիւնը մեր խեղճ գիւղացիներին:

Լ. Ս.

17) ԲՃ. Ա. ԲՈՒԿՈՒՂԵԱՆԻ Առողջապահական գրեյդներ:

ԲՃ. Ա. Բուգուղեանը այն հազուագիւտ հայ գիտնականներից է, որոնք ապրելով հեռաւոր հիւսիսում, մայրաքաղաքներում, չեն մոռանում իրանց պարտքը—գոնէ գրչով մի բան անել իրանց հայրենակիցների համար: Նրա գործունէութիւնը մարմնացած հերքումն է ժողովրդի մէջ տարածուած այն զար-